

ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Ուրբաթ, 4 Յունուարի, 2008

Սիրելի ունկնդիրներ ընդունեցեք մեր ջերմագին շնորհալորանքները 2008 թուականի Նոր Տարուայ եւ Սուրբ Ծննդեան տօնի առիթով: Մաղթում ենք, որ 2008 թուականը լինի բարեբեր եւ երջանկաբեր տարի հայրենիքում եւ սփիւռքում ապրող համայն հայութեան համար եւ համատեղ ջանքերով ու պայքարով իրականանան Հայ Դատի եւ հայ ժողովրդի անժամանցելի իրաւունքներն ու ցանկութիւնները:



Երկրորդ տարին լինելով, Հ.Յ.Դ. Բըրբանքի «Նիկոլ Աղբալեան» կոմիտէութիւնը լոյս է ընծայել գեղատիպ օրացոյց-գրքոյկ, որի իւրաքանչիւր շաբթուայ էջը զարդարուած է Հայաստանի բնութեան գեղեցիկ տեսարանների, պատմական յուշակոթողների, արուեստի գործերի եւ հայրենաբնակ ժողովրդի առօրեան պատկերող լուսանկարներով: Օրացոյցից օրինակ կամ օրինակներ պատուիրելու համար կարելի է զանգահարել Բըրբանքի Հայ կենտրոնը, (818) 562-1918 հեռախօսահամարով եւ կամ այցելել համացանցային www.burbankanc.org/Calendar/2008/ կայքէջը:



Դեկտեմբերի 14-ին կարճատեւ այցելութեամբ Լոս Անջելոս ժամանեց Բէյրութում հրատարակուող «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Շահան Գանդահարեանը, որի հետ առիթ ունեցանք հանդիպելու եւ հարցազրոյց ունենալու թերթի գործունէութեան, լիբանանահայութեան եւ ընդհանրապէս Լիբնանանի ներկայիս իրավիճակի մասին: Սոյն հարցազրոյցը կարելի է լսել միանալով ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կայքէջի համացանցային ձայնասփիւռի բաժինը՝ www.ARF1890.com հասցեով:



Գլէնդէլ-Կապան քոյր քաղաքների ընկերակցութիւնը, Նոր տարուայ նուիրահաւաքի իր աշխատանքների շրջանակում, աւելի քան 1700 նուէրներ է հաւաքել Կապանի մանկապարտէզների աշակերտութեան համար: Երկրորդ յաջորդական տարին է, որ կատարուում է սոյն նուիրահաւաքը Գլէնդէլ-Կապան քոյր քաղաքների ընկերակցութեան ջանքերով: Նշենք, որ Հոկտեմբերի սկզբին ուղարկուած նուէրները արդէն իսկ Դեկտեմբերին հասել եւ բաժնուել են Կապանի 12, ինչպէս նաեւ մերձակայ 19 շրջանների ու գիւղերի մանկապարտէզների աշակերտութեանը, ցնծութիւն պարգեւելով հայրենիքի մեր մանուկներին: Նուէրները ընդգրկում են դպրոցական պայուսակներ, գրեմային պիտոյքներ եւ խաղալիքներ, ինչպէս նաեւ դպրոցների համար՝ գրասեղաններ, աթոռներ եւ խոհանոցային սարքեր: Գլէնդէլ-Կապան քոյր քաղաքների ընկերակցութիւնը ոչ շահադիտական կազմակերպութիւն է, որը հիմնադրուել է ՀՅԴ Գլէնդէլի Հայ Դատի Յանձնախմբի, Գլէնդէլի եւ Կապանի

քաղաքապետարանների համատեղ ջանքերով, երկու քաղաքների միջև տնտեսական համագործակցութեան եւ մշակութային կապերի զարգացման ու ծաւալման նպատակով:



Սան Ֆրանցիսկոյի Հայ օգնութեան միութեան «Կարին» մասնաճիւղի նախաձեռնութեամբ, Կիրակի, Դեկտեմբերի 16-ի կէսօրից յետոյ ժամը 2:30-ին, Սան Ֆրանցիսկոյի Հայ կենտրոնի «Սարոյեան» սրահում, տեղի է ունեցել ՀՕՄ-ի երեցների ծառայութեան հիմնադրութեան 20-ամեակի տօնակատարութիւնը, որին ներկայ են գտնուել շրջանի ազգային ներկայացուցիչները, ՀՕՄ-ուհիներ, երեցներ ու համակիրներ: Միջոցառմանը ելոյթ է ունեցել ՀՕՄ-ի «Կարին» մասնաճիւղի ատենապետուհի Մայրա Պէզճեանը, որն ակնարկելով ՀՕՄ-ի մարդասիրական աշխատանքներին, նշել է, թէ 20 տարիներ առաջ, «Կարին» մասնաճիւղի վարչութիւնը ծրագրեց ամսական դրութեամբ համախմբել շրջանի հայ երեցներին ու ստեղծել իրենց համար հաճելի ու հայկական ջերմ մթնոլորտ՝ շրջապտոյտներով, ընկերային հաւաքոյթներով ու զանազան զուարճալիքներով: «Ահաւասիկ, այսօր՝ 20 տարի անց, հաւաքուել ենք այստեղ տօնելու քսանամեակը այն աշխատանքի, որի արգասիքն ենք վայելում բոլորս»,- ասել է նա:



Կիրակի, Դեկտեմբեր 16-ի երեկոյեան ժամը 6-ին, Գլէնդէլ միջնակարգ դպրոցի հանդիսասրահում տեղի է ունեցել «Համազգային» հայ կրթական ու մշակութային միութեան Լոս Անջելոսի մասնաճիւղի «Անի» պարախմբի տարեկան ելոյթը պարուսոյցներ Սիւզի Բարսեղեան-Դարբինեանի եւ Եղիա Հաշօլեանի ղեկավարութեամբ: Ներկայացուել են 23 հայկական տոհմիկ եւ ազգագրական պարեր: Միջոցառմանը ներկայ են գտնուել աւելի քան 1000 հանդիսատեսներ, մեծ մասամբ երիտասարդներ:

Այս լուրերը տրամադրուում են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: